* * * *

Քու տէրն ալ որ քեզ ունի, գիշերը՝ ի՞նչ քուն կու լինի.
Տարին օրեկ մը ինծի, այն օրեկն է հազար տարի:

* * * *

Մարդ որ սիրոյ տէր լինի ’ւ սիրուն ճարակ չիլինի,
Ինքը՝ գերեզման բանայ ու մտնէ հողը՝ կենդանի,
Սրտիկն ալ ի բաց թողու, որ ելլէ բոցը՝ ծիրանի.
Անցնող ու դարձող ըսէ՝ Սիրոյ տէր մարդ է կու վառի:

* * * *

Բարի լուսոն դուսր ելայ, ես աղուոր կտրիճ մի տեսայ.
Աղուոր կտրիճ մի տեսայ, զարկաւ իմ երեսն արունեց:
Մայրիկն ալ հարցմունք արաւ. «Ադ երե՛սը՝ ո՞վ արունեց».
– Ես ասօր պախչան իջայ, վարդենուն փըշիկն արունեց:
– Չորա՛յ ան վարդին փուշը՝ որ քու լուս երեսդ
–Մ’աներ, մ’անիծեր, մարի՛կ, մէկ աղուոր կտրիճ մ՚ իս պագաւ.
Պագաւ թէ առնէ մուրատ, կ’անիծես՝ կ’ելնէ պեմուրատ:
Կապեմ ալ նէ թուլ կապեմ, որ հովե՛ր՝ տանի բերէ.
Հա՛յ տար ու բեր, տար ու բեր, գէշը՝ տար ու աղուորը՝ բեր:
Ես աս գիշեր դուսր ելայ, մութ գիշեր՝ չիկար լուսընկայ.
Իմ եարս ալ ըռաստ եկաւ, ձեռքը՝ կար ոսկուն մաշալա.
Թեւէս բռնեց տուն տարաւ, դուռ դըրաւ ախիկն ի վըրան,
Ձըգեց խուշ թիւյի տէօշէկ, սէրէսեր բարձերն ի վըրան,
Սազեց ոսկունքէն սեղան, հաւ խորված, կաքաւն ի վըրան:
–Խըմէ՛ որ ըսեմ՝ Անո՛ւշ, ես մէվզա բռնեմ քեզի նուշ.
Սէրը՝ սիրողին վայլէ, աս գինին՝ անուշ խըմողին:
Ինչեխ անտունի մ’ըսեմ, որ թնտայ խատեհն ի ափիդ,
Խատէհն ի ափիդ թնդայ, ոսկեթել պեխերդ երեսիդ:
Սէր կայ մարդն ի քուն կ’անէ, սէր կայ մարդն արթուն կու պահէ:
Սէր կայ մարդն ի ժամ տանի՝ անաղօթք ի տուն կու բերէ:

* * * *

Խըմեր եմ ու չեմ գինով, ես կ’երիմ ու չեմ կըրակով,
Հագեր եմ սիրու շապիկ՝ աղուորին դուռը՝ կայնելու:
Աղուոր մ’ալ ներսէն ի դուրս, ծոցն ի լի կարմիր խնծորով:
Ըսի թէ հատ մի առնեմ, թունդ ելաւ՝ թուխ աչքն ի լալու.
Լացաւ ու լալով ըսաւ՝ «Ե՛ար, զիս խաղք արիր ցորեկով,